ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 242 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 61-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի հունվարի 30-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին» ծրագրի մասին» N 61-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Անգոռ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09216379) 2024 թվականի մարտի 4-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 33-րդ փողոցի 14 բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,592,839 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բերձոր Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09220729) 2024 թվականի մարտի 4-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի

Տեղ բնակավայրի Ս. Բարխուդարյան 11/1 հասցեի շինության վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 4,452,461 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բերձոր Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09220729) 2024 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրի 2-րդ փողոցի 4 բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,783,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Անգոռ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09216379) 2024 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 46-րդ փողոցի 6 բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,717,879 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Բերձոր Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09220729) 2024 թվականի մարտի 7-ին կնքված՝ N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 44-րդ փողոցի 24 բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Անգոռ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09216379) 2024 թվականի մարտի 7-ին կնքված՝ N 7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 18-րդ փողոցի 10 բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,870,578 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ